

Յ Ե Ր Գ Ե Ր

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

18

«ՊՐՈԼԵՏԱՐ»-Ի
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱԿ. ՀԱԿՈԲՅԱՆ
(ժող. պոեմ)

ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԵՈՐԳ ԳՐԻԳ

ՅԵ. ԳԱԼՃՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ԱՂԱԲԱԲ

ԲԱՏՐԱԿ ՀԱՅԿ

ՎԱԶԳԵՆ ՏԱԼՅԱՆ

ՄԵԼԲՈՆ ԳՈՒՍԱՆ

891.99

201-61

ՀՀ ԽՍՀ 2011
Գրողները բոլոր յերկրների, միացե՛ք

№ 18

ՊՐՈԼԵՏԱՐԻ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՆԱԶԱԿԱՆ
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԵՐԳԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

8104
40504



ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ «ԳՐԱԼՆՑՈՐ» ՈՐԵՐՆԵՐԻ

1936 թ.

Պատասխ. խմբագիր՝ Ռ. ԼՈՒՍԻՆՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝ Մ. ՇԱՏՎՈՐՅԱՆ

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

(Ժող. պոետ)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

(Հասկած)



Ո՛ր, Թիֆլիս սիրած, ոջախ հարազատ,
յերկրորդ հայրենիք,
Յերբ վուրս դրի առաջին անգամ հողդ գեղանի՝
Ինձ վողջու՛յն տվեց զողանջն ուրախ ձիաքարշերիդ,
Յեվ հիացք բերող թռիչքը հարպիկ կոնդուկտորներիդ:

Յես այն ժամանակ մազերս քամուն տված մի ջահել—
Լայնեզր ֆետրե գլխարկը բաշած գլխիս սեվահեր՝
Անհո՛գ, յերազո՛ւն, վզիս մետաքսե փողկապ սեվաթույր.
Կտարածեյի փողոցներուդ մեջ ջահելության բույր:

Աղմկալից եր ամեն ինչ այնտեղ՝ փողոցն ու շուկան,
Յեվ գվարթ, կայտառ թաքախը գլխին
կինտոն իսկ անգամ,
Մեծն Աղաձյան այստեղ եր—բեմից առաջին անգամ
Ներշնչեց իմ մեջ վոզին ճշմարտի և գեղեցկության:

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվ. «Զարյա Վաստակ»-ի հրատ. տպարան

Պատկեր № 1906

Գլավլիտ № 14206

Քանակ 2000

Ո՛հ, իմ հայրենի՛ք խլրտունների, յես չեմ մոռանա,
Թե ինչպես մի որ դասի ժամանակ

Լադոն¹⁾ են խիզախ

Դաշույնը մխեց դեկան եկզարխի սիրտը բռնակալ—
Այդպիսով ուզեց բուրսայից վանել

ստրկություն, վախ:

Յես այն ժամանակ բուրսային մոտիկ

դեղատան բանվոր—

Ուր ներքին հարկում սրվակներ եյի

լվանում վողջ որ՝

Ծափահարեցի Լադոյին հետո իմ մուկ նկուղում,

Ու հանդուգն միտք հղացավ անգամ

իմ խենթ ուղեղում՝

Մտածում եյի... «չվառե՛մ, արդյոք, դեղատունը վողջ
Ու վերջ տամ այսպես հարստությանը

կեղեքիչ տիրոջ.

Չե՞ վոր յես ունեմ գլխիս սեվ գլխարկ անարխիստների,
Յեվ վզիս կապած փրփրոտան վզոց կրենպ-դը-շինի»:

Ու այդ որից եր, վոր իմ պատանյակ սիրտը խլրտուն
Ապրեց մի անուշ մի լավ զգացմունք...

կարծես թե Լադոն—

Դա վրեժն եր իմ, վոր լուծվեց մահով

դաժան ռեկտորի...

Չե՞ վոր յես յեվս դպրոցից բշված նման զոհ եյի...

¹⁾ 1886 թվին Թիֆլիսի Եմիլիանովի ուսանող Լադո Լադի-
շեն թեի մեջ թաղցրած դաշույնով դասի ժամանակ սպանեց բուր-
սայի ռեկտոր մետրոպոլիտ Ջուզենեկուն, նրա ազգատալաց բողա-
քականության համար: Սա Թիֆլիսի անդրանիկ հեղափոխական
ահաբեկիչ ակտն եր վրաց նաբոդոլյութիների կողմից: Ծ. Հ.

Ու յերկրորդ անգամ, իմ սիրուն Թիֆլիս,
յես գիրկդ ընկա—
Ցուցարարների մի հոծ բազմություն յեկել եր շուկա.
Հանկարծ անվեհեր Առաքելն ընկեր—
դեպոյի բանվոր—
Հանեց գրպանից կարմիր մի փաթեթ—չիլայի կտոր.

Կապեց այն ծայրից հաստ ու հաստատուն
իր զավազանի,

Ու ողբ հանեց ուղիղ թթի տակ Գլխով գազանի.
Առաջին անգամ Թիֆլիսը տեսավ դրոշակ կարմիր,
Առաքելը հաղթ առաջին անգամ—մեր դրոշակիր:

Ու դրոշն ողում դեռ փողփողում եր
բարձր ու հպարտ,
Յերբ պայթեց հանկարծ ամբողջ շուկայում
մարտելոգը հաղթ.
Վազեց վոստիկանն, հեղքեց շարքերը դրոշը խլելու՝
Վարպետը, սակայն, իրեն չկորցրեց, յեկավ կռվելու:

Հաստ զավազանի են փշոտ ծայրով
այնպես հարվածեց
Իր խոռյանին, վոր վոստիկանի գանգը ճարճատեց.
Այսպես Թիֆլիսը առաջին անգամ մտավ պայքարի
Արյան հոսանքի ու բռնության դեմ Նիկոլայ ցարի:

Հե՛յ, տոն ե յեղել ամեն մի որր խլրտուն կյանքիս
Ու չեմ իմացել ինչպես եմ հասել վոսկի հասակիս.
Հե՛յ, տոն ե յեղել, յերբ կարմիր արյան
հոսանքը ցարի
Ինն հարյուր մեկ թվին մեզ հետ կատաղի
մտավ պայքարի:

Ռ-Ի Ո Ն Գ Ե Ս

Ռիոնգեւս, ահա՛ և յես...

Յես, վոր տեսա մեծ յեղբորդ՝ Վոլխովստրոյին,
Հոչակավոր Դնեպրոստրոյին,
Ջահել, գոգալ մեր Ջագեսին,
Պոետ դարձած Ջորագեսին—
Վողջու՛յն քեզ:

Տեսա մեկի ամբարտակը հոյակապ, վես,
Մյուսի խրոխտ շլուզները սքանչելի,
«Փահմ ու սամթով» Շիր-կանալի խլրտուն գես
Յեվ Սվիրստրոյ—մեջքը արած դյուզ ու չոլի:

Մինչ դու կանաչ բլուրներին թիկն տված՝
Ու պարուրված բուլաջի մեջ կանաչ մախմար,
Ծիծաղում ես խնդուն, ջահել հարսի նման,
Եդ նագելի մեջքիդ կապած վոսկե քամար:

Կամարներդ ամպերի մեջ բացված շուրթեր,
Ողից կախված կասես դալար ծաղկաթերթեր.
Յեվ ջրերդ Իմատրայի փրփուր խասեր—
Խենթի նման վո՛նց կվազեն, վո՛նց կվազեն...

Հե՛յ, լույսերդ...

Ուրախացող սիրտ ե կարծես ամեն լամպադ,
Ամեն սյունդ բրով կերտած մի հուշարձան.
Փայլ աստղերի ցանցով նշած ուրախ ճամպադ
Ջրիդ շաչը հեռվից յերգող ջութակի ծայն:

Յեվ ուժե՛րդ...

Հիմք բետոնող նոր կենցաղի ու նոր կյանքի,
Ջեստաֆոնի գործարանին սնունդ-դայակ.
Յեվ Սուրամի լեռների մեջ աշխատանքի
Տեմպ ու թափի մեծ հեղինակ:

Ռիոնգեւս...

Վոր խոսում ես Գուլթայիսի ամեն տան հետ,
Մութ հյուղերին ու գյուղերին նոր կյանք շնչում՝
Քեզ յեկել ե այցելության մի ծեր պոետ,
Ջահել ու ժիդ, արեվ լույսիդ հազա՛ր վողջույն:

1932

Մ Ե Տ Ե Խ Ը

(Հեղափոխական բալլադ)

Ասում են տարին մի բանի անգամ
Քուռն ե կարմրել արյան շերտերով.
Արյան շերտերը առույի նման՝
Մետեխի ժայռից ծորել են հերթով:

Ասում են արյան ամեն մի կաթիլ
Թուլնի յե փոխվել ժայռից ծորալիս.
Յեզդահիճներին խեղդել յերկաթի
Իր ողակներով ցասամաճ թունալի:

Ամեն առավոտ, պաղ լուսածեղին—
Ասում են Քուի ջրերը պղտոր՝
Բողոքի շեշտով արյունոտ յերգի
Ալեկոծել են ափերն անդորր:

Թե այդ բողոքի ալիքները թեժ
Թիֆլիսն ե ցնցել իր խուլ թաղերով.
Յերդվել են թաղերն լուծելու վրեժ
Մահապարտների թափված արյունով:

Ասում են տարին մի բանի անգամ
Քուռն ե կարմրել արյան շերտերով.
Արյան շերտերը հրդեհի նման
Քաղաքն են վառել իրենց հուր յերթով...

ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՑԱՆ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ
ՎՈՂՋՈՒՅՆ

(Խորհրդային Վրաստանի
մեծ ռազմական)



Հ Ա Տ Վ Ա Ծ Ն Ե Ր

1.

... Բերկրանքի, բերքի, բյուր յերգի յերկիր,
Բոլշեվիկյան ջերմ սրտաբուլղիս վողջուն
Քո լուսե տոնին պայծառ, վոսկեգիր,
Հաղթանակներիդ հզոր, հարաճուն,
Բերքի ու բեղուն բերքի նոր յերկիր:

2.

Ուզում եմ գտնել խոսքն ամենապարզ,
Պայքարի, սիրո խոսքը մտերիմ
Ու բեզ նվիրել, բե՛զ, արեւավարս

Յերկիր Վրաստան, ու այդ խոսքը պարզ
Ընկերն ե, և դու անգին ընկերն իմ:

3.

Ծաղկի, ծաղկունքի յերկիր դու պայծառ,
Մեր մեծ պայքարի աննկուն ռազմիկ.
Ինչքան հուժկու յես կորովով քո վառ,
Այնքան նուրբ, նարին, վորպես մի հասմիկ,
Վորպես հեքիաթի վոսկեթերթ մի ծառ:

4.

Ո՞վ եր, վոր տեսավ ու չսիրեց քեզ,
Բոլշեվիկներիդ աննկուն, անպարտ,
Քո մարտիկներին միշտ աշխույժ ու վես,
Բարձունքները քո՝ հզոր ու հպարտ,
Զա՛ն, արեւ յերկիր, բարեւ, վողջույն քեզ:

5.

Հեքիաթներ ունես, լեզունդ ու վերհուշ,
Մեծ յերգիչների արեւոտ յերգեր,
Բայց այդ ամենից ավելի անուշ,
Ավելի թովիչ առորյա ունես,
Կառուցումների բարձրացող յերկիր:

6.

Առորյա ունես թովիչ, բայց տենդոտ,
Վերելքի անգուսպ թռիչք դեպի վեր,
Յեւ փոշի կա դեռ, և թանձր ե ու տոթ,
Բայց միայն այդպես գրոհն անվեհեր
Մեզ կտա վերջին հաղթանակը մոտ...

7.

Բոլշեվիկների ջոկատ ես տվել,
Պողպատե մարդկանց մի սերունդ արի,
Նրանք սիրել են կյանքից առավել
Գրոհը ըմբոստ մեծ պայքարների,
Վորոնց բովի մեջ ՄՏԱԼԻՆՆ ե սնվել,
Մեծ զինակիցը Մեծ ղեկավարի:

8.

Բերկրանքի, բերքի, բյուր յերգի յերկիր,
Բոլշեվիկյան ջերմ, բոցավառ վողջույն.
Քո տասնամյակին պայծառ, վոսկեգիր,
Հաղթանակներիդ հզոր, հարաճուն,
Վերելքիդ անգուսպ՝ նորից բյուր վողջույն:

ՎՈՉ ԼԵԳԵՆԴԱՅԻՆ

ԽՈՍՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Տասնամյակի առթիվ

«Արզանավորդները ավանդություն հիմքում դրված են բավական լայն տարածված ծովային հերոսներին ու արկածներ վորոնողներին խիզախ ցեղի՝ մենեացիներին ծովային ճամբորդությունները»:

Նրանք ճամբորդում էին դեպի հեռավոր երկրներ՝ արևելքից, վորի մասին հիշում է նաև Հոմերոսը, յենթադրելով նրա տեղը ծայր արևմուտքում: Յերբ առևտրի և ծովային հաղորդակցություն համար բացվեց Սև ծովը, արևելյան յերկիրը տեղափոխեցին նրա արևելյան ծովեզրը, Կողքիս, ուր Ֆազիս գետը լեռներեց վոսկի յեր բերում:

Տեղացիները այդ գետի ջրի մեջ էին պահում վոչխարների գեղմերը (մորթիները) և վորոշ ժամանակ անցնելուց հետո, յերբ ջրից հանում էին մորթիները, նրանք ծածկված էին լինում վոսկի տվազով: Անվեհներ ծովազնացները առևտրի համար այդ թանկագին իրերը տանում էին և հայրենիքում պատմում իրենց գլխովն անցած արկածներն ու վրտանգները, համեմելով այն հրաշալատում զրույցներով: Յեվ մեծից սկսած մինչև փոքրն ագահորեն լսում էին այդ տաբորինակ պատմությունները»:

(Վ. Վեգներ՝ «Հեղադա», յերես 113):

Լեգենդներ, յերգեր կրկնակի թովիչ,
Հերիաթի չեղած հսկաներ, ավար,
Յեվ Մերանին¹⁾ բո,— ահա ամեն ինչ,
Ինչ ունեցել ես մինչև Փետրվար:

¹⁾ Առասպելական հրեդեն ձի:

Բայց այդ ամենը յերազ է յեղել,
Խաբուսիկ ու սին մի տենչ, մի յերազ,
Իսկ իրականում բեզ սովն է նեղել
Ու սեվ որերի մահը վերահաս:

Ճորտությունն անվերջ ու արնոտ շերտով
Մերկ մարմնիդ փովող մտրակի շաչուն,
Ու նորից կսկիծ, ու նորից հերթով
Դարեր են անցել ցավով շառաչուն...

Այդպես է յեղել, և ինչեր ասես
Դեզ չի հորինել հանճարդ արի,
Վոր մի կերպ մեղմի ցավդ հարակեզ,
Մորմորդ անհուն բոլոր դարերի:

Հետո ցարական դահիճներ անսիրտ,
Վորոնք ճգմել են, ճնշել անսահման
Կամբղ ապստամբ ու արսեններիդ
Խիզախ, բոցեղեն տենչն ազատություն...

Ինչ ճնշում ասես, կողոպուտ ու դավ
Ձի ծածկվել թովիչ լեգենդի վոսկով,
Ու հեքիաթների անտառներում թավ
Դանի՜ սերունդներ մոլորված խոսքով...

Հիմա, յերբ չկա անցած որերի
«Վոսկեղեն» մշուշն ու թանձր մեզը,
Գինը այդ բոլոր սին որորների
Գիտե մեզանից և ամեն մեկը:

* * *

Լեզենդներ... վարար, վառ ու վոսկեշող,
Յեվ ծանր, վորպես շիթերը արյան
Վիրավոր կրծքից մորմորով ծորող,
Վորպես սոսկումը սեվ, միջնադարյան,

Քո ժայռերին չե՞զամված տառապել
Տիտանը խիզախ՝ Պրոմեթեյն անմահ,
Նա, վոր յերկնքից հու՛րն ե մեզ բերել,
Առասպելական բոլշեվիկն անահ:

Արծիվն ե կոինչով հոշոտել նրան,
Սիրտը քրքրել անընդհատ, դաժան.
Այդ դո՛ւ յես յեղել, հորտ ու անբերան,
Քե՛զ են հոշոտել իշխաններդ ժանտ:

Քեզ են վորոնել արգոնավորդներն՝
Անհուն «կարոտով», ցանկությամբ անշեջ,
Քե՛զ են վորոնել, վորպես վորսորդներն
Երեն են փնտռում թավուտների մեջ...

Արգոնավորդներ՞, թե՞ մի հրոսակ
Մեծ ուղիներին ավարի յեւած.
Իսկ դու մի յերկիր փոքր ու դեռհասակ,
Վորպես մի ծաղիկ անուշ, նոր ծլած...

Վորոնել են քեզ, բայց վոչ սերդ մով,
Գառններիդ վոսկի մորթին են փնտռել,
Վոսկեավազը գետերիդ հունով
Յեվ վուշեղենդ՝ թավիշ, վոսկեթել...

Յեվ յեղնիկներից անուշ քո կանանց,
Դանգուր մազերով, նազան ու նարին,
Յեվ այն ամենը, ինչ վորպես մի զանծ
Թանգ ե միշտ յեղել նրանց աչքերին՝

Կողքիսն¹⁾ արեվի վողկույզներով վառ,
Հերիաթի հարուստ անտառներով խուռն,
Յերկիրը գեղմի հրաշք, հրավառ,
Մեղեայի բորբ սիրո պես՝ հախուռն...

Արգոնավորդներ՝ ոտար ու մոտիկ,
Հեռու, հարազատ բազում թավաղներ,
Իշխողներ դահի՛ն ու հարուստ մարդիկ, —
Ահա ովքեր են քեզ լկեկ դարեր...

Սրանք են յերգել Իվերիան²⁾ փարթամ,
Լեզենդներով սուտ փառքդ գովերգել,
Վոր սերունդները լեզենդը կարդան,
Իրենք կողոպտեն յերկիրն անարգել...

Սրա՛նք են յերգել՝ լույս ու նազելի,
Մատներով նրբին, կամարունք, զվարթ,
Խորունկ աչքերով հրաշք գազելի՝
Թամարաների յերկիրը շվայտ...

Գինին ե հոսել ջրից ել առատ.
Արծաթապատ սուր դաշույններ փայլել,
Վոչինչ չեն թողել անբիծ, անարատ,
Հարբել են անհագ, անզուսպ վայելել...

¹⁾ Կոլխիդյան հովիտը:

²⁾ Վրաստանի պատմական հին անունը:

Յեվ անգուսպ անշել, մտրակել անսանձ,
Անվերջ ուրիշի քրտինքով ոգտվել,
Յերկիրն են թաղել խավարում անանց
Յեվ... «վոսկեղար» ե ամենն այս կոչվել...

Այդպես ե յեղել՝ չարքաշ ու հարքած
Ֆեոդալական Վրաստանը հին,
Մեկը հարքել ե մինչեվ լուսաբաց,
Մյուսըն՝ հոգնատանջ լացել «Ուրմուլի»-ն¹⁾:

* * *

Բայց ահա ուրիշ, ուրիշ ես այսոր,
Հրեղեն կամբով փոխվել ես, յերկիր,
Հրաշքի նման պայծառ ու հզոր,
Դրոշներով նոր, դու նոր ջահակիր...

Չարքաշ գեղջուկն ե իր աչքը բացել,
Կորացած մեջքը ուղղել ե համառ,
Դա քո բանվորն ե թեվերը պարզել,
Յելել պայքարի նոր կյանքի համար:

Այդ մենք ենք հիմա, վոր բորբոք սիրով,
Մեր լցված սրտի ավյունով անհուն,
Յերբ հարկ ե լինում՝ և հրե սրով,
Քո նոր դաշտերի նոր հերկն ենք անում...

¹⁾ Վրացական սելվորե տխուր յերգ:

Անցնում ենք բոլոր ճամբերով վստահ,
Դաշտերով խոպան ու մութ ձորերով,
Անցնում ենք հրեղեն շարքերով հաստատ
Յեվ հին Կողբիսի նեխ ճահճուտներով:

Այդ մենք ենք արդեն, վոր ատում ենք քո
Ֆեոդալական հին Վրաստանը,
Յեվ այսոր ուրախ՝ ամեն յերեկո
Նոր յերգ ենք յերգում ազատ մեր տանը...

Լենինյան հզոր պայքարի յերգն ե,
Կառուցումների խիճիկն անհուն, անշեշ,
Արեվի պես ջերմ կոլեկտիվ հերկն ե,
Նվաճումների դեռ չեղած մի տենչ:

Յե՛րգն ե նոր թափի, և այն նո՛ր ափի,
Վորին ծգտում ենք, ինչպես չի ծգտել
Աշխարհում վոչ վոք, և վո՛չ մի արփի
Մեզ համար այնքան թովիչ չի յեղել...

Մեծ Ղեկավարի հզոր պատգամն ե,
Վոր դու կրում ես պայծառ աստղի պես,
յերկիր արեվի,
Յեվ սա գիտեցիր, վերջին անգամն ե,
Վերջին բարձունքն ե, վոր պիտ զրոճես...

Թող հինն սպառնա ճորտատիրական,
Թշնամին վռնա հանդեպ վերելքիդ.
Անդարձ ես անցել ուղիդ վերջնական.
Կասեցում չկա հաղթական յերթիդ:



Լեզենդը անցավ, ել լեզենդ չկա,
Կա մի հրեղեն պայծառ առորյա,
Ո՞վ ե, վոր կույր ե, ո՞վ ե չի զգա
Առորյան այդ վառ, հզոր ու յերահ...

Միլիոնների գոռ յերթի առորյան,
Կառուցումների փոշով ծածկված...
Սա՛ յե լեզենդը քո վոսկեղարյան,
Միակ լեզենդը մեր սիրով սնված...

1931

ԼԵՌՆԵՐԻ ԱՐԾԻՎԸ

Մերթ մռայլ ու մեզ, մերթ պայծառ, վնիտ,
Մերթ վարար ու խենթ, հախուռն ու ժխոր,
Վորպես լեռները վեհ հայրենիքիդ,
Ու հեղեղատներն անդունդներում խոր,—

Այդպես են, Վաժա, քո յերգերն անգին,
Քո խոսքերը բոքը, վոր հողմի նման
Մեկ մրրկվում են լեռների կրճքին,
Ու մեկ ել թռվում կարկաչով գարնան...

Այդպես ես, Վաժա, ո՛ր, սեզ լեռների դու արծիվ հզոր,
Վոր սիրել ես միշտ դու բարձր հախրել,
Բայց միշտ թեվաբեկ, հաճախ արնածոր,
Կիրճերում խավար ինչքա՛ն ես տխրել...

Բայց ելի հպարտ, դու միշտ անվեհեր,
Հուր-կայծակներին միշտ մոտ ու ընկեր...

=====



ԶԵՄ ՄՈՌԱՆԱ

Շատերն ընկան, շատերը կան ու կզան,
Մեր պայքարի գիրքը նոր եջ կբացի.
Զեմ մոռանա են շիկահեր աղջկան,
Վորին այնքա՞ն ափսոսացի ու լացի...

Ամեն անգամ, յերբ զալիս եր ժողովի,
Ցերը խոսում եր այնպես մեղմ ու թովչական,—
Մեզ թվում եր, թե աղբյուրն ե կարկաչում,
Խիտ, հովանուն անտառների կանաչում:

Լույս հայացքով, վճիտ, վճիտ ու սիրուն
Նայում եր մեզ, և՛ ժպտում եր, և՛ խոսում.
Մի նոր խինդով, նոր աշխույժով հարազատ
Համակում եր, տանում հեռուն ու հեռուն:

Ու մի որ ել, յերբ ժողովի յեկավ նա,
Բանվորական մի խուլ թաղում հեռավոր,

Գծում եյինք անելիքներն ապագա,
Խոսում եյինք կռվի մասին ահավոր:

— Իմ ընկերներ,—ասաց նա մեզ ջերմագին,—
Մոտ ե ժամը, մոտ ե ժամը մեծ կռվի,
Հոկտեմբերի շաչն ու շառաչն եմ լսում,
Պիտի յեղնենք մի արյունոտ պայքարի...

— Իմ ընկերներ...
Սակայն խոսքը կիսատ մնաց շուրթերին,
Մենշևիկյան վարձկանները ներս ընկան,
Շատերի հետ կապկպեցին ու տարան
են շիկահեր, լուսաժպիտ աղջկան:

Նրան տարան... ու չտեսա ել յերբեք,
Զլսեցի անուշ խոսքը ել նրա,
Ու հայացքը այնքան վճիտ, թովչական,
Ել չտեսա, ել չտեսա յես նրան...

Շատերն ընկան, շատերը կան ու կզան,
Մեր պայքարի գիրքը նոր եջ կբացի.
Զեմ մոռանա են շիկահեր աղջկան,
Վորին այնքա՞ն ափսոսացի ու լացի:

I.

Նստում եմ մեկ-մեկ
Ու բաց եմ անում
Անցած որերիդ
Դիրքը արյունոտ.
Յենում են բեկ-բեկ
Անցած մշուշից
Հուշերը տխուր
Մեկ-մեկից թունոտ...

Ահա իջել ե
Դաշտերիդ վրա
Մի արնամշուշ
Տխրամած աշուն.
Ահա շաչել ե
Ամպրոպը գլխիդ
Ու կուրծքդ խրվել
Մի արնոտ դաշուն...

Յեվ գալարվել ես
Դարձապարի տակ
Կռալիտ, տմարդի,
Վայրի թավադի,
Յեվ լաց ես յեղել
Ամայի դաշտում
Վիրավոր, ավեր,
Ծարավ, անոթի...

Մեկ ել նետել ես
Կոկոն առ կոկոն
Ծաղիկները քո
Արեվի դիմաց,
Կանաչ վարսերդ
Հովիտ ես տվել
Աչերդ զամել
Յերկնքին ամպած:

Սակայն սեվաժիրտ
Խորշակն ե յեկել
Սիրտդ խոցոտել
Իր շնչովը տաք,
Ծաղիկ ու կանաչ
Թաղել ե անհույս
Մոխիրների տակ,
Մոխիրների տակ...

Ու փռվել ես դու
Վիրավոր, ավեր
Յեվ կծկվել ես
Ցավից խելազար.
Ու հար չի յեղել,
Ու հար չի յեղել
Վշտերիդ անհուն
Յեվ հողմերին չար...

II.

Այժմ ուրիշ ե
Այժմ ել չկա

Անցած որերիդ
Դիշերը այդ սեւ,
Այժմ՝ բացվել ե
Դաշտերիդ վրա
Պայծառ ու կարմիր
Խնդուծյան արեւ:

Ահա արտերդ
Ժպտում են իրար
Ու հացն ե, հացն
Ծփծփում անուշ,
Բամբակն ե փռվել
Ձյունի պես վարար,
Հովն ե որորում
Քուլաներ ընքուշ...

Ու զրնգում ե
Մեքենան ուժով,
Անիվը դառնում
Արագ ու արագ.
Կոլխոզնիկների
Յերգն ե զողանջում
Խնդուծյամբ ծաղկում
Անտառ ու ձորակ...

Ջմրուխտ լեռներդ
Իրենց կուսական
Անբիծ, անարատ
Կուրծքն են բաց անում,

Քարածուխ, յերկաթ
Մարգանեց, պղինձ
Մարմար, մոլիբդեն
Ամենուր փռում:

Յեւ բարձունքներից
Գահավեժ իջնող
Ջրվեժներդ խենթ,
Գետերդ հորդուն,
Իրենց հորձանքից,
Թափից կատաղի
Լույսի և ուժի
Աղբյուր են կերտում...

Ու փռվում ես լայն
Դաշտերովդ մեծ
Բորբոքում սիրտը
Հինավուրց գյուղի,
Շարժի յես բերում
Անիվ, գործարան,
Բյուր մեքենաներ
Ու յերկաթուղի...

III.

Ո՛ր, ցնծա, ցնծա,
Յերկիր իմ ջահել,
Մատաղ ե սիրտս
Քո պայծառ տոնին,
Թող առավոտից

Մինչեւ առավոտ
Քռի պես հոսի
Կախեթի զինին:

Թող բարձր հնչեն
Ծափն ու դայիրան,
Փռովի ամենուր
Յերգը խնդուծյան,
Թող անուշ ժպտա
Դարերի խորքից
Մեծագույն վարպետ
Լուսերես Շոթան...

Թող աղջիկները
Նազեն նրբահեն
Յեղնիկի նման
Շորորան անուշ,
Յեւ պուրակներում
Ծաղկե նշենին,
Նարգիզ ու մեխակ
Շշնջան քնքուշ:

Յեւ դաշտերդ թող
Բերքով ուռճանան
Ու հող չմնա
Անմշակ, խոպան.
Այդպես ե ասել
Մեր մեծ առաջնորդ
Իմաստուն վորդիդ
Հանճարեղ Կոբան:

Նա', վոր պատմության
Բանալին ձեռքին
Բացում ե ամեն
Հանգույց ու փական,
Նա', վոր կերտում ե,
Դարբնում անդուլ,
Ուրախ, յերջանիկ
Բախտը մարդկության:

Ո՛հ, ցնծա, ցնծա,
Յերկիր իմ ջահել,
Մատաղ ե սիրտս
Քո մեծ զավակին,
Թող բարձր հնչեն
Ծափն ու դայիրան
Քո հերոսական
Տոնին խնդագին...

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Աշխատավոր բանակներիդ,
Զավոդներիդ, զագեսներիդ,
Յե՛վ շենքերիդ վեր խոյացող,
Յե՛վ դաշտերիդ մարգարտացող,
Յե՛վ գետերիդ հարահնչուն՝
Բոցավառված վողջու՛յն, վողջու՛յն...

Հույսի, հույսի իմ նոր յերկիր,
Թափի, տեմպի աղբյուր յերկիր,
Սոցիալիզմի համբնն բռնած,
Հաղթատարած՝ հերոս յերկիր:

Սովխոզների արտով յեկար,
Կոլխոզային զարդով յեկար,
Հերոսական՝ դժար համբեդ
Հպարտ, անպարտ, ուրախ յեկար:

Ամեն սարդդ, ամեն բարդդ,
Ամեն ծառդդ իր յերզն ունի,
Ամեն վարդդ, ափոս շարդդ,
Անուշահամ իր բերքն ունի:

Ի՞նչ խոսքերով յես քեզ գովեմ,
Ի՞նչ ծաղիկներ համբիդ փռեմ.
Եսքան տարվա մեծ պայքարդդ,
Ի՞նչ տառերով, ինչպե՞ս գրեմ:

Աշխատավոր բանակներիդ,
Զավոդներիդ, զագեսներիդ,
Յե՛վ շենքերիդ, վեր խոյացող,
Յե՛վ դաշտերիդ մարգարտացող,
Յե՛վ գետերիդ հար կարկաչուն՝
Բոցավառված վողջու՛յն, վողջու՛յն:

ՅԵՐԳՁԻ ՄՈՏ

(Մեծ պոեմի վաժաշի հիօսասկիւն)

Նա լուռ կարդում եր սիրտը բնության,
Իսկ յես՝ յերգերն իր նուրը ու թրթռան.
Ու ամեն քառից, տողից, հնչյունից,
Լցվում եր սիրտս արյուն ու կսկիծ:

Ահա լեռնցին մանկան մոտ նստած,
Արցունքն աչքերին խոր մորմոքվելիս,
Ահա արծիվը վիրավոր ընկած,
Անզուսպ զայրույթից խենթորեն լալիս:

Ահա ծորերը, լեռները արթուն
Մեծ սպասումի վամին մտախոհ.
Ահա գետերը, ջրերը հորդուն
Սեղմ ու կաշկանդող ափերից դժգոհ:
Հենց այս ծորերում, լեռների լանջին,
Ուր դեղին-դեղին մշուշն եր իջել,
Չարքաշ, չքավոր գյուղերի մեջքին
Ծանր բռնության մտրակն ե շաչել...

Հենց այս ծորերում, լեռների լանջին,
Խնջա՞ն ե խորհել ու հուզվել վաժան,
Մեծ սիրտը քսել քարին ու հողին,
Անվերջ անիծել կարգերը դաժան:

Հենց այս ծորերով, ճամբերով վուրը
Հանդարտ յելնում եմ կատարը լեռան.
Վոնց վոր լեռների արծիվ վիրավոր
Իմ դեմն ե կանգնում տխրադեմ վաժան:

Քննող հայացքով նայում ե նա լուռ,
Ինչ-վոր խոսքեր ե շնջում անկապ,
Բացում ե սիրտը մորմոքված, տխուր
Ու մատը մեկնում թռչնին թեվաթափ:

Ասում եմ. «վաժա, սիրելի պոետ,
Անցել են, չկան որերը եդ հին.
Անցյալի շղթան փշրել ենք հավետ
Յեվ վողջունում ենք նորոգ աշխարհին»:

Բայց չքանում ե տեսիլը հանկարծ,
Լսվում ե անուշ կարկաչն աղբյուրի,
Չմրուխտ անտառի սոսափը անանց,
Ազատ, յերջանիկ յերգը հողվորի...



ՅԵ. ԳԱԼՃՅԱՆ

ԱՐԵՎԱԽԻՆԴ ՈՐԵՐԻ ԱՂՋԻԿԸ

Նոճենհասակ աղջիկ ես դու, Նթերի՝
Վոսկեզանգուր, վոսկեպուրպուր վարսերով.
Բիլ աչքերումդ փրփրահոս գետերի
Հո՛ւրն ե շողում հաղթանակի վառ սիրով:

Կանգնել ես դու վոնց ուզմագետ մի հմուտ
Ու չափ տալիս իլիկներդ արշավին.
Իլիկիդ պես ուռճանում ե մի կարոտ
Ու լուռ այրում սրտիդ այգին ծարավի:

Սուրում են մեղմ նուրբ թելերը մետաքսի
Ջյունահերմակ թեվերի պես աղամլու,
Յեվ այդ բնքուշ թելերի հետ միասին
Բո հուշերի վոսկեթիթեռն ե թեվում...

Յերբ վոր կանչի հերթափոխի զանգը քեզ,
Ու կանգ առնեն իլիկներդ արշավող՝

Նրանց դարձյալ հրաժեշտի խոսք կասես՝
Վառված նորոգ աշխատանքի բորբ խանդով.

Իսկ յերեկոն յերբ վոր իջնի լեռներից
Յեվ ծառուղում վառի աստղեր խնդագին,
Կհանդիպես քո սիրածին դու նորից
Ու կժպտաս շողի նման լուսայգի...

Նա դարձել ե Կարմրադրոշ բանակից,
Կուփված՝ վորպես սվինն իր սուր ու հատու.
Նա բերել ե պայքարելու մի նոր լիցք,
Խիզախության կամք մի հզոր, անհատնում:

Նույն ծառի տակ կծաղկեր դուք վարդի պես,
Նա մեղմ կերգի ծանոթ յերգը սիրավառ,
Յեվ այդ յերգին դու քո սերը կհյուսես,
Ջինջ ու պայծառ՝ յերկնքի պես ամառվա:

Նոճենհասակ աղջիկ ես դու, Նթերի՝
Վոսկեզանգուր, վոսկեպուրպուր վարսերով.
Բիլ աչքերումդ փրփրահոս գետերի
Հո՛ւրն ե շողում հաղթանակի վառ սիրով:

ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Արյուն...

Արյուն եր կաթում որերին այն մութ,
Որերի մարմարե ցրտից՝ կաթ-կաթ արյուն՝
Դաշտերին, դաշտերին խոպան,
Ավեր հյուղերին.
Արյուն եր կաթում բանվորի բորբոսնած հացին.
Արյուն, արյուն, արյուն:

Ձմեռ:

Իրիկնամուտ:
Ոջախի առաջ կծկվել ե լուռ
Պառավ մի աչքերն անկրակ
Յեվ թոռան ծեռքով,
Յեռամյա թոռան՝ մահորեն գունատ,
Խառնում ե հույսով մի համառ
Մոխիրը,
Վոր ավելի, ավելի յե ցուրտ,
Քան շունչն իր ընդհատ:

Բացվում ե դուռը հանկարծ...
Պառավի սրտում անարյուն,
Ուր հուշերն իր վորդու հեռավոր
Ջերմության կայծեր են վառում,
Ասես մի թել կտրվեց—
«Նա՞ յե, արդյոք, վոր դարձավ
Կռիվներից լուսաշող,
Թե՞ քամին եր, վոր խաղով
Հրեց դուռը և անցավ»...

Փորձում ե կանգնել՝
Ծնկները լուծվել են կարծես...

— Պառավ, դե՛, ասա՛,
Վորտե՞ղ ե Շալվան, ասա՛, շուտ ասա,—
Մռնչում ե անզուսպ ներս մտած սպան
Վոլորուն բեղերի տակից,
Իսկ հետի յերկու զինվորները խեթ
Գամփռերի նման մոռում են հլու:
Խեղդվում ե ճիչը
Թոռնիկի կծկված կոկորդում,
Յեվ հայացքը նրա
Գամվում ե սպայի արյուն աչքերին:
Յնցվում ե պառավը ոջախի առաջ—
Գաղտնիք ու սոսկում...
— Ձգիտեմ, չգիտեմ,— շշնջում են կամաց
Շրթները նրա ցրտորեն սմբած:

Մտրակը դառնում ե ողում
Ու՝ շրափ—իջնում
Պառավի կողերին վոսկրոտ.
— Կսպանեմ, քավթառ,
Պիտ ասես տեղը բուլբուլի տղիդ...
Թոռնիկը ճչում ե վերջապես,
Ճիչով մի տարորեն խեղդված,
Յեվ ընազդը նրան գցում ե իսկույն
Դիրկն իր տատի:
— Ձգիտեմ,— այս անգամ արդեն,
Պնդում ե պառավը հաստատ.
Թոռնիկին գրկած ցատկում ե վոտքի

Յեւ վշտահար մոր ամբողջ զայրույթով
Թքում նրա յերեսին:

Դազազում, գազազում ե սպան,
Վազրի աչքերով ուտում պառավին,
Պառավին խիզախ,
Զգվանքով նայում

Իր տատի գրկում ծվարած մանկան
Յեւ վոտքը խփում գետնին.

— Զե՞ս ասի, հա՞...

Սուրը նրա մահասարսուռ

Սողում ե իսկույն պատյանից դուրս,

Շողալով իջնում

Յեւ մանկան թեվիկը կտրելով.

Ո՛ր, խրվում պառավի կուրծքը ոռոգենյան...

Շանթահար թռչունի նման՝

Պոկվում ե, ընկնում մանուկը թեվատ

Իր տատի գրկից,

Իսկ պառավն որոր, հիգով մի վերջին

Հենվում ե պատին իր կողքի

Յեւ արնոտ շրթներով գոչում.

— Դիտե՛մ, գիտե՛մ,

Բայց չեմ ասի, շուն...

ՎԱՐԴԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Լ Ի Ր Ի Կ Ա Կ Ա Ն



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՄ ԵՐԿԻՐԻՆ

Հոգուս մեջ յես միշտ որորել եմ
Հուրաջք արեմ, լուսե մի առավոտ.
Շուրջս հիմի ամեն ինչ նորել ե,
Ուղիներդ խնդուն, արգասավոր...

Թերթել եմ որերդ, կարդացել եմ
Պայքարիդ պատմությունը լուսնկա.
Արեվը հիմի իր շուրթը թացել ե,
Ասես նռան գինի լինի ըմպած...

Կյանքը լավ ե հիմի, կյանքը ուրախ,
Ու թովում ե ինձ վերելքդ աննկուն
Իմ դեմ քացվել ե խնդության սրահ,
Ու հոգուս տվել թափ, իմաստություն:

Յերկիր իմ, զինովցել եմ յես ել
 Կառուցումից, որերից քո փիրուզե:
 Այսքան բերք ու խինդ յես յե՞րբ եմ տեսել,
 Յե՞րբ եմ ունեցել յես այսքան հույզեր...

Հոգուս մեջ յես միշտ որորել եմ
 Հուրաչք արեմ, լուսե մի առավոտ.
 Շուրջս հիմի ամեն ինչ նորել ե,
 Ամեն ինչ պայծառ, արգասավոր...

ՌՌԻԲԵՆ ԱՂԱԲԱԲ

Յ Ե Ր Գ



Ա.

Գիշեր ե սաթ,
 Աստղերն արծաթ
 Յերկնի ծովում
 Ծիր են ծրում.
 Ակն ու վտակ
 Թփերի տակ
 Քչքում են
 Ու բրբջում,
 Հովը թեթեվ
 Քնքուշ յեթերն
 Ակոսում ե,
 Կամ հոսում ե
 Ալեկոծով,
 Իսկ սար ու ձոր
 Կարծես անքուն
 Արծազանքում:

Բ.

Ու յերբ արփին
Սյգաբացին
Կատարները
Անտառներին
Նախշի զառով
Յերգով, խաղով,
Վողջույն կտա
Կիրճն այս հսկա,
Կիրճն այս հսկա,
Կիրճն այս չքնաղ,
Ժիր-կենդանի
Քորլիանի¹⁾,
Վոր Զեկարի²⁾
Լի ամբարից
Սկիզբն առած,
Հոսում ե ցած:

Գ.

Իսկ բլուրին
Մամուտ ու հին
Վանքն ե իշխում:
Մարդ չի հիշում,
Թե քանի դար
Կանգուն ե, կա,
Վորպես կոթող,
Վորպես բեկոր

¹⁾ Քորլիանի—գետ Մցխեթում

²⁾ Զեկարի—լեռ: Հայտնի յե Զեկարի լեռնանցքը:

Հին արվեստի—
Շինարվեստի
Բլրին բազմած
Վանքն այս Զարգմա³⁾
Հեքիաթային
Մեծ Շոթայի
Յերկրում այս վեհ
Կոչված Մեսխեթ¹⁾:

Դ.

Յեվ դու սարի
Ջիգ կատարից
Դիտում ես ցած—
Գորգ ե փռած,
Կարծես նախշուն
Ես լայն դաշտում
Համայնակին:
Ու դյուլթական
Մի անուշ յերգ
Հնչում ե մեղմ:
Հայրենիքիս
Աշխատանքի
Հերոս մարդու
Յերգն ե ազդու
Հնչում անաս
Դաշտում անախ:

³⁾ Զարգմա—պատմական հարտաբաղնաթյան կոթող: Հիմ-
նադրման տարեթիվը հայտնի չե (մոտավորապես 10-րդ դար):

¹⁾ Մեսխեթ—այժմյան Ախալցխայի ե Սդիդենի ռայոնները:



ԲԱՏՐԱԿ ՇԱՅԿ

ՎՐԱՍՏԱՆԻՆ

Հաղթ ու հպարտ քո մեծ տոնին յես մատաղ,
Ո՛ր, իմ յերկիր վոսկեծիծաղ, անուշիկ,
Քո այստորը ունի հազա՛ր յերգ ու տաղ
Ու մի նոր կյանք լուսապայծառ, յերջանիկ:

Վառ վարդերից վա՛ռ ես դառել, վարդ յերկիր,
Մեծ լենինյան ճոխ պարտեզում վարդով լի,
Քո նոր կյանքով զա՛րդ ես դառել, զարդ յերկիր,
Որերդ վառ, միշտ ու անվերջ այսպես ուրախ

Թող լինի,

Վորպես բոցոտ շիրակեցի մի տղա,
Զա՛ն, արբել եմ քո նոր կյանքի հուր գինով.
Ահա յերգն իմ՝ քո մեծ տոնին բեզ ընծա,
Վոր հյուսեցի սրտիս անշեջ կարոտով:

ՎԱԶԳԵՆ ՏԱԼՅԱՆ

ԽՈՍՔ ՄՏԵՐՄՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԻՐՈ

(Մի ագարուհու)



1.

Աղջկային իրանը քո բանի՛ տարի,
Կըքել ես դու տիրոջ դաշտում ու հառաչել
Ու շիթերով քո մրմուռի, ինչպես ցողիկ,
Դալար թեյի գանգուր թփերն ես միշտ ցողել:

Քանի՛, բանի՛ առավոտներ վոսկեճառագ
Տրտմահայաց դիտել ես լուռ այգը հրդեհ,
Յերագել ես ապրել զվարթ, խինդով առատ,
Ճախրել ազատ, ինչպես ճայ մի հերմակաթեվ:

Փշրվե՛լ են կյանքի ափին ապառաժե
Ալեկոծված քո հույզերը ալիք-ալիք,
Յեվ իշխանը գոռոզատես, բիրտ ու անեղ,
Տրորել ե վոսկեպտուղ տունկը պատվիդ:

Ու ջղածի՞գ պոկոտել ես թեյը հասուն,
Զայրույթի խոսքն ալ հոնի պես քո շուրթերին...
Յերբ փռել ե լուսինն արծաթ շղարշ ծովուն,
Տնքացել ես բյուր հոգսերից, աջարուհի՛:

2.

Լուսատուն բորբ վառ արեւեց որդի խոնավ,
Կրժքումդ ըմբոստ զիլ տրտիեց սիրտդ վարդհուր,
Յերբ դուք յեւաք տերերի դեմ ձեր նենգադավ,
Յերգով լցրիք յերկրի լանջերն արեւաթույր:

Ամպերն հնի պատոեց արեւն այն որերին,
Սիրտդ նխաց ու շնչեցիր ամբողջ կրժքով,
Դու յերգեցիր պարզած դրոշ ու քայլեցիր
Յերջանկության գարնանաբույր համպաներով:

Յեռանդը քո կոհակնացավ, հորդեց ուժգին,
Յեւ աչքերով փիրուզափայլ խորունկ ու ջինջ
Տեսար դու պարզ, զգացիր խոր քո հուր արփին,
Յերկրիդ վաղը՝ անեզր այգի լույս նարնջի:

Հիմա զգաստ ու սլացող մտքերով դու,
Մրցման հրով ու հաղթության լույսով անմար,
Կողովներով կրում ես հար բերքը հորդուն,
Համայնական կյանքում՝ վարպետ դու թիավար:

Յերեկոյան գուրգուրանքում մտերիմիդ,
Յերբ սեղմում ե իր առնական կրժքին նա բեզ,
Զգում ես դու զարկերակը ջահել յերկրիդ,
Ասես զգվում հազարներին սիրով հրկեզ:

2.

Ո՛ր, անցյալի չադրան նետած դու մայրություն՝
Աստղաժպիտ, զվարթածիծաղ ու հաղթական
Քո անունը կանցնի ծովե՛ր, անձայրություն՝,
Անզուսպ խինդդ ափին հեռու կզրնգա:

Ու պարուրված զավակներիդ սիրով վսեմ,
Քո յերկրի՞ լուսավողող շավիղով լայն,
Յերջանկության զագաթներին հասնես լուսե,
Աջարուհի՛, արծաթահեր ջահելությամբ:

1936 թ. ԹԻՖԼԻՍ.



ՄԵԼՔՈՆ ԳՈՒՍԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Հգորագոր յերկիր,
Հրաբորբոր դու ջահ,
Ձուլվել եմ քո յերթին
Ու շարքերին անահ,
Ձուլվել եմ քո յերթին,
Քո պայքարին լուսե,
Վրաստան, իմ յերկիր,
Քեզ բյուր վողջույն ու սեր:

Դու յեղնում ես վերեմ
Պողպատակուռ քայլով
Ու շողում ես իմ դեմ
Շեկ խաղողիդ փայլով,
Դու փռել ես անգին
Ինչքան առատ բերքեր,
Վրաստան, իմ յերկիր,
Յես քեզ ինչպե՞ս յերգեմ:

Ինչքան ջրեր վարար
Քո կրծքում դու ունես
Ու զագեսներ անմար՝
Ջրերում լուսերես.
Քո շերտերում անծիր՝
Ինչքան հանքեր վոսկի,
Վրաստան, իմ յերկիր,
Պոետ գործի, խոսքի:

Ո՛ր, դու անհուն բերկրիր,
Վառվիր անմար հրով,
Յես պարզել եմ յերգի
Մի արնավառ դրոշ.
Յես ձուլվել եմ յերթիդ
Ու շարքերիդ աճուն,
Վրաստան, իմ յերկիր,
Քեզ բյուր, հազար վողջույն:



Յ Ա Ն Կ

ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ—Թիֆլիս	3
Ռիոնգես	6
Մետեիլ	8
ԱՂԱՍԻ ՎԱՐՂԱՆՅԱՆ — Բուրեվիկյան վոդյույն	9
Վոչ լեզնդային	12
Լեռների արծիվը	19
ԳԵՈՐԳ ԳՐԻԳ—Չեմ մոռանա	20
Խորհրդային Վրաստանի 15-ամյակին	22
Խորհրդային Վրաստանին	28
Յերգչի մոտ	30
ՅԵ. ԳԱԼՃՅԱՆ—Արեվախինդ որերի աղջիկը	32
Նախորդյակին	34
ՎԱՐԴԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ—Լիրիկական	3
ՌՈՒԲԵՆ ԱՂԱԲԱԲ—Յերգ	3
ԲԱՅՐԱԿ ՀԱՅԿ—Վրաստանին	4
ՎԱԶԳԵՆ ՏԱԼՅԱՆ—Խոսք մտերմության ու սիրո	40
ՄԵԼՔՈՆ ԳՈՒՍԱՆ—Խորհրդային Վրաստանին	46

ՀՀ Ազգային գրադարան



NL0323904

28685

ԳԻՆԸ
50
ԿՈՊ.



ԼԵՔՏԵԲԻ — ՏԱԶՅՈՒՏԱ ՏԱՄԱՐԻՄՎԵԼՈՏ

(Լեքստա կրებულի սօմեխուր ԵՆԱՅԵ)

ԳԱՅ. «ՅԱՐՈՒԼԵԹԱՐ»-ԻՏ ԳԱՄՈՏԵՎՄԱ

ПЕСНИ—СОВЕТСКОЙ ГРУ

(Ու արմյանսկօմ լԶԻԿԵ)

ԻԶԸ. ԴԱԶ. «ՍՐՈԼԵԹԱՐ»

391.99

ԶԵ-77